ւածքը, գոր պստիկ տղջիկ մը արտասանեց։

Մէնէրգերուն յաճախ կը միանար ջութակը, նաև տեղական երիտասարդները ջութակներով «Վաթան մարշի» նուագեցին։

Հանդիսի ընթացքին՝ դպրոցի ուսուցիչներէն պ. Յովհ. Շահմուրադեան խօսեց հայ գրերու գիւտի, իսկ պ. Բ. Կապուտիկեան հայ տպագրութեան մասին։ Հանդէսը փակեց դպրոցի տնօրէնը՝ Պ. Սարգիս Բարսեղեան, յայտնելով թէ «անկարելի է, որ տասն հինգ դարերու կուլտուրա ունեցող հայ ազգը Ասիայի այս խաւար անկիւնին մէջ, լուսաւոր ջահը միշտ իր ձեռքը բռնած այս ժողովուրդը, չտիրանայ լուսաւոր ապագայի մը»։

Հանդէսէն յետոյ հիւրերը պատուասիրուեցան թէյով։

Կազմուած է առանձին մասնախումբ մը, գոր պիտի ձեռնարկէ հանգանակութեան ի նպաստ դպրոցական ֆոնդի. միացնելով հոս հաւաքուած գումարը կեդրոնի—Պոլսոյ մէջ հանգանակուած գումարին, գաւառիս մէջ վարժարանոց մը բանալու համար։

Հուր

# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

## ՄԵԾ ՏՕՆԸ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ

### ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍ

Վերին-Ագուլիսի նման կուլտուրական մի վայր չմասնակցել համազգային մեծ յոբելեանին անշուշտ չէր կարող, քանի որ այդ զոյգ տօնը—նամանաւանդ տառերի 1500-ամեակը—ընդհանուր հայկական լինելու հետ միասին, սիրելի և նուիրական է մասնաւորապէս Գողթն գաւառի համար, որ իր սրբազան ծոցում ընդունել և գործունէութեան ասպարէզ է շնորհել տառերի անմահ հեղինակին։

Դեռ աւելին ևս. մեր պատմագրերի վկայութեան համաձայն, ս Մեսրոպը հենց այստեղ, Գողթնում է յղանում հայ գրեր ստեղծելու սքանչելի միտքը, որովհետև ամենից զօրեղ կերպով այստեղ, այս եզակի ու հեթանոսութեան մէջ քարացած ժողովրդին քարոզելիս է նա շօշափում, ապրում այն դժուարութիւնները, որ ազգային սեպհական գիր չունենալուց էին առաջանում։

Ու հայ գրի գաղափարը մտքում, Տարօնի աննման ցօղով սնուած Մաշտոցն ուղևորւում է հայոց հայրապետի մօտ—նրա թոյլտուութիւնը, ցուցմունքները հայցելու։

Բնական է ուրեմն, որ երախտագիտութեան ձայնը ամենից աւելի բարձր Ագուլեցոց մէջ պիտի խօսէր։

Եւ յիրաւի. երբ հրապարակ հանեց տառերի գիւտի ու տպագրութեան յոբելեանները տօնելու խնդիրը, Ագուլիսը առաջին վայրերից մէկն եղաւ, որ սիրով ընդառաջ գնաց այդ գեղեցիկ առաջարկին։ Երբ 1912 թ. օգոստոսի 3-ին դպրոցում գումարուած բազմամարդ ժողովում, Նւաստիս առաջարկութեամբ, խորհրդակցութեան դրւեց այդ հարցը, ժողովականները միաձայն հաւանութեամբ ընտրեցին 7 հոգուց կազմուած յոբելեանական յանձնաժողով և լիազօրեցին նրան թէ հանդէսներ կազմակերպել և թէ հանգանակութիւն անել յօգուտ դպրոցական ֆոնդի։

Պէտք է խոստովանել, որ յոբելյանձնաժողովը պատուաւոր կերպով կատարեց իր վրայ դրած պարտականութիւնները։ Գործելով ուսուցչական խմբի հետ ձեռք-ձեռքի տուած, նա միացաւ դպրոցի որոշումներին և անցած հոկտեմբերին միասին տօնեցին յոբելեանական տարւայ բացումը դպրոցական մի ճոխ ցերեկոյթով։ Նոյն երեկոյեան դպրոցի շէնքում տեղի ունեցաւ մի բաւական շքեղ ժողովրդական զբօսանք հրաւառութեամբ հանդերձ։ Յոբելեանական տարւայ փակմանը ևս նա մասնակցեց, յատուկ պատգամաւոր ուղարկելով Էջմիածին։

Գալով հանգանակութեան գործին, պէտք է ասել, որ յոբելեանական յանձնաժողովը մեծ յաջողութեամբ առաջ տարաւ նաև այդ խնդիրը։ Դրա պերճախօս ապացոյցն է այն, որ նա կարողացաւ փոքրիկ Ագուլիսում կարճ ժամանակւայ ընթացքում—հանգանակութիւնը դեռ շարունակւում է--գանձել 825 րուբլի, որ նուիրել են. Առևտրական տուն Ս. Հախնազարեանց, Գ. Արեանց, Ա. Ներսէսեանց և ընկ. 500 ր.։ Սէքսան Ալանեանց 60 ր., Քրիստափոր Յակոբեանց 25 ր., Յովհաննէս Մարգարեանց 25 ր., Նիազ Մարգարեանց 30 ր., Յարութիւն Գէորգեանց 25 ր., Ստեփան Կարապետեանց 50 ր., Եղբայրք Ստեփանեան Միքայէլեանց 25 ր., Գարեգին Մելիք-Մարութեանց 25 ր., Հայկ Տէր-Միքայէլեանց 25 ր., Պետրոս Պետրոսեանց 10 րուբլի։

Պէտք է յիշատակել, որ բոլոր նուիրատուների հետ միասին յատուկ շնորհակալութեան է արժանի նաև վիճակիս յաջորդ Սիօն վարդապետը, որ Ագուլիս գալով, անձամբ մասնակցեց նուէրների մի մասի գանձմանը։

Ճշմարտութիւնը պահանջում է խոստովանել, որ Վերին-Ագուլիսի դպրոցն ևս իր կողմից ջերմ մասնակցութիւն է ունեցել համազգային մեծ յոբելեանին։ Վերևում արդէն ասւեց, որ յոբելեանական տարւայ բացումը նա տօնեց բաւական շքեղ կերպով. Իսկ փակմանը ս. Էջմիածնի հանդէսներին նա մասնակցեց յատուկ պատգամաւորի միջոցով։

Յակ.

### ՏԱՇՔԵՆԴ

Հ կտեմբերի 13 ին, պատարագից յետոյ, կատարւեց հայրապետական մաղթանք, որի ժամանակ երգեց, առաջին անգամ, նորակազմ քառաձայն խումբը։ Մաղթանքից յետոյ եկեղեցական թափօրը ս. Թարգմանչաց շարականը երգելով ելաւ եկեղեցուց և ուղևորւեց դէպի դպրոց։

Սկսւեց հանդէսը,—գրական առաւօտ։ Խօսեցին ծխատէր հայր Մարկոս քահանան, աւագ-ուսուցիչ պ. Աղ. Միրզայեան, հոգաբարձու պ. Տ. Յովսէփեան և հոգաբարձութեան նախագահ պ. Ա. Թադէոսեան. վերջինս կարդաց և էջմիածին ուղարկւած հեռագիրը։

Դպրոցի սան-սանուհիները մէջ ընդ մէջ արտասանում էին տօնին պատշաճ ոտանաւորներ ու երգում մանկական երգեր։ (Մեր դպրոցը ունի միայն ս. բ. բաժ. և երեխաները մանր են)։

Հանդէսին ներկայ էր մեծ բազմութիւն։

Հանդէսի վերջը քաղաքիս հայ աշակերտութիւնը հիւրասիրւեց թէյով ու մրգով։

Ս. Նաւիկեան

## ՄԵԾ ՏՕՆԸ ԹՈՒՐՔԱՀԱՅԵՐԻ ՄԷՋ

Կիրասոն, 24 հոկտ.

Համազգային մեծ տօնը այստեղն ալ իր արձագանգն ունեցաւ։

Կիրասոն, Օրդու, Տրիպոլի, Ֆաթսա, Ունիէ հայկական գաղթավայրեր են եղած հին ժամանակներէ ի վեր, և ներկայիս իւրաքանչիւրը այդ քաղաքներէն ունի 1000—4000 հայ բնակչութիւն և իր ազգային-կուլտուրական կեանքը։

Այստեղի ազգային կանոնաւոր շրջաններէն երկ-երկու հոգիէ բաղկացած յոբելեանական յանձնախումբ մը կազմւեցաւ նախապէս, որու ջանքերով յոբելեանական հանդէսը տեղի ունեցաւ հոկտ. 13-ին, կիրակի, ժամը $7^1/_2$ (ը. թ.) հայոց եկեղեցիին մէջ։

Հրաւիրւած էին տեղիս բարձրաստիճան անձնաւորութիւնները —կայմագամը, զինւորական պետը, քաղաքագլուխը, յունաց միտրոպոլիտը, կաթոլիկ միսիոնարութիւնը, թիւրք վարժապետանոցի պաշտօնէութիւնը, կոնսուլները և այլն։

Երգւեցան «Բամբ... որոտան», «Մեր հայրենիք», «Մայր արաքսի» ազգային և «Ծիրանի ծառ», «Ջիմ վզին» ժողովրդական խմբերգերը դպրոցի երկսեռ աշակերտութեան կողմէն, իսկ օր. Գեղեցիկ Պարտիզեանի (ուսուցչուհի) երգած «Լռեց Ամպերը» բաւական գոհ թողուց ներկաները։

Արտասանութիւններէն յիշենք օր. Նորարևեանի «Ամբուխն իմ աշխարհը» (բանաստ. Յ. Յակոբեանի) և օր. Եսթեր Մանուկեանի «Ով մեծասքանչ դու լեզու» (երկուքն ալ աշակերտուհի). իսկ ուսուցչուհիներէն օր. Սաթենիկ Պօղոսեան արտասանեց Սիամանթօի «Տարօն», օր. Գ. Պարտիզեան նոյն հեղինակի «Հողին ձայնը»։ Նաև շատ լաւ տպաւորութիւն թողուց ուսուցչուհիներէ մէկի պատրաստած «Սահակ և Մեսրոպ» փոքրիկ պատմը-